հաճեսցի գէթ ի միջոցի երից աւուրց շնորհ առնել և տալ մեզ զպատասխանի գրաւոր, զի ըստ այնմ արասցուք և մեք զործոնն, ապա թէ ոչ, և այնպէս ունիմք մեք ուր հարկնէ ծանուցանել։

Մնամք ճշմարիտ և կատարեալ վերապատուութեամբ Վ. Ե. Հաստիճանութեան ձերում։

ամենախոնարհ ծառայք
Միաբանք արարատեան Պատրիարքական Աթոռոյ
Սրբոյ Էջմիածնի։

Արքեպիսկոպոս Հայոց Սիմէօն Բզնունեանց
Արքեպիսկոպոս Գրիգոր արթմնցի
Նիկողայոս եպիսկոպոս Տէր Մարտգեանց
Յօհաննէս վարդապետ ղրիմեցի
Գէորգ վարդապետ ամթեվցի
Ստեփան վարդապետ Արարատով
Յօհաննէս վարդապետ Շահխաթունեանց
Մարտիրոս վարդապետ Շահազիզեանց

Համար 1. ի նոյեմբերի 16. 1833 ամի
ի Ս. Էջմիածին.

ԿՈՒՍԱԿԱԼԻՆ ԳՐԵՑԻ ՕՐԻՆԱԿ ԶԱՅՍ

Նորին բարձր գերազանցութիւնն.
Գլխաւոր կառավարչին Վրաստանու Տեառն Հեններալ Օտի-փանոէր և զանազան նշանակեր բարոն Րօզինն առաջին։

Սիմէօն Արքեպիսկոպոսէ Հայոց
Ամենախոնարհաբար խնդիր։

Ձերին բարձր գերազանցութեանն խոնարհաբար յայտ առնեմ որ ես ընդ երից հոգեւորականաց խնդիրք մատուցաք ձեզ վասն կառավարութեան սրբոյ Էջմիածնայ, և ձերդ բարձր գերազանցութիւն ուղեցիք մեզ ի Թիֆլիզ, և մեք աղօթող եղաք վասն անզին կենաց ձերդ բարձր գերազանցութեան. մանաւանդ առաւել եւս զի յուսացուք ստանալ ընդ խնդրանաց մերոց զօրինաւորն վճռահատութին, և զկնի ժամանելն մեր ի Թիֆլիզ. դուք